

իրողութիւններու վրայ շատ երկար որոճացած է եւ այսօր դիտէ, թէ կարող են պատահիլ այնպիսի դէպքեր, որ բուշելիկ Ռուսաստանը փոխադրեն Հիւսիսային Կովկասէն անդին: Հայաստանը ինկած է ամենէն հեռաւոր անկիւնը բուշելիկեան կայսրութեան, եւ ոչ ոք կարող է երաշխաւորել, որ վաղը Ուքրայնան, Լեռնականները, Կովկասեան Հանրապետութիւնները կամ Թուրքիստանը չեն ապստամբիր, եւ տեւական կամ ժամանակաւոր ինքնուրոյն կեանք մը չեն յաջողիր ստեղծել իրենց համար: Այն ատե՞ն: Այն ատեն մենք եւ թուրքերը կը մնանք մինակ եւ միշտ պայքարի մէջ:

Վտանգ ըսելով, մենք այս վայրկեանը կը հասկնանք:

Արդեօք բարեմիտներ կա՞ն, որ երազեն, թէ ուսը նստելով Մոսկուա, բոցավառ խօս-

քերով պիտի կրնայ առաջն առնել հայերուն սպոտնացող վտանգին, եթէ պահ մը ընդունինք, որ բարի պիտի ըլլայ մտածելու մեր մասին:

Գոնէ այժմ պէտք է հայ ժողովուրդն ազատել այդ երազներէն ու յոյսերէն: Այդ ազատագրումը կ'ըլլար ոչ միայն վտանգի կատարեալ դիտակցութիւն մը, այլ նաեւ այդ վտանգին դիմադրաւելու նուազագոյն պատրաստութեան նախապայժանը:

Փոթորկալի օրերուն, բուշելիկեան Ռուսաստանը որեւէ երաշխիք չունի հայութիւնը պաշտպանելու թուրք-թաթարական տարրին դէմ: Լաւ է, որ հայ ժողովուրդն այդ սեւ օրերու համար այլ միջոցներու մասին մտածէ:

(Վերջը յաջորդով)

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՅՈՒՇԵՐԻՑ

Գրեց՝ ԹՈՒՐԷՆ ԽԱՆ-ԱՉԱՏ

ԳԼՈՒԽ XXII
Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ ՈՒ ԻՐ
ՅԱՆՏԱՍՏԻԿ ԾՐԱԳԻՐԸ

ԹԻՖԼԻՍԻ մեր ժողովներում տեղի ունեցած բոլոր անցուդարձերի մասին, մեր կայացրած բոլոր որոշումների մասին, ամէն շաբաթ ես մանրամասն զեկուցում էի ժընէվի ընկերներին: Շատ լաւ ճանաչելով Նազարբէկներին, ես զգում էի, որ նրանք շատ էլ գոհ չեն մնալու մեր կայացրած մի քանի որոշումներից, նամանուանդ այն որոշումներից, որոնց համաձայն Նազարբէկների զերն ու ազգեցութիւնը կուսակցութեան մէջ սահմանափակումների մէջ էին դրուում: Դրա համար էլ աշխատում էի զանազան բացատրութիւններով, կարելիին չափ, մեղմացնել տպաւորութիւնը:

Չափազանց մեծ էր ոգեւորութիւնս միութեան եւ ընդհանուր գործակցութեան գաղափարով, ուզում էի, որ ամէն զնով գլուխ գայ այդ գործը: Յաւն այն է, որ բոլոր ժողովա-

կաններն էլ նոյն ոգով չէին վերաբերում դէպի գործը:

Հազիւ մի քանի օր անցած այն որոշումից, թէ «Հնչակ»ը խմբագրուելու եւ հրատարակուելու է, որպէս Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան գիտական օրգան, որի խմբագրութեանը մասնակցելու է նաեւ Ք. Միքայէլեանը, յանկարծ ժողովում ինձ հարց տրւին, թէ զրե՞լ եմ արդեօք ժընէվ, որ «Հնչակ»ը առժամապէս դադարեցնեն, մինչեւ Ք. Միքայէլեանի գնալը:

— Եթէ չէք զրել, — ասացին, — հեռազրէք, որ դադարեցնեն:

Գում-Գաիուի ցոյցից յետոյ «Հնչակ»ը ոչ թէ առաջուան պէս ամիսը մի անգամ էր լոյս տեսնում, այլ շարաթը մի անգամ: Հասարակութեան ոգեւորութիւնն ու տրամադրութիւնն այնքան էր բարձրացած, որ շարաթը մի անգամ «Հնչակ» ստացուելն էլ շատ քիչ էր թւում: Հարցնողներ էին լինում, թէ չի՞ կարելի արդեօք, որ դոնէ շարաթը երկու անգամ լոյս ընծայուի այդ թերթը: Իսկ այստեղ, նո-